



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

### Հ Ր Ա Մ Ա Ն

25 հոկտեմբերի 2019թ. թիվ 1565

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ  
ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԹԻՎ 276 ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ  
ԱՆՁՆԱԳՐԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2019 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 02/45.5/47863-2019 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 21-ի թիվ 276 հրամանի հավելվածի «10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ (65-2.2-10)», «97.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետ (65-3.3-5)», «98. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետ (65-3.3-6)», «99. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետ (65-3.3-7)» և «115.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջին կարգի մասնագետ (65-4.2-6)»

տողերը շարադրել նոր խմբագրությամբ՝ «10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) պետ (95-3.3-Ղ4-1)», «97.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջատար մասնագետ (95-3.3-Մ3-2)», «98. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային

հողային պետական տեսչության) առաջատար մասնագետ (95-3.3-Մ3-3)», «99. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջատար մասնագետ (95-3.3-Մ3-1)» և «115. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջին կարգի մասնագետ (95-3.3-Մ6-1)»

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) պետի (95-3.3-Ղ4-1), Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջատար մասնագետի (95-3.3-Մ3-1), Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջատար մասնագետի (95-3.3-Մ3-2), Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջատար մասնագետի (95-3.3-Մ3-3) և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջին կարգի մասնագետի (95-3.3-Մ6-1) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն 1-5 հավելվածների:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

 Invalid signature

X 

ՀՐԱՅՐ ՊԱՊՈՅԱՆ

Հ. ՊԱՊՈՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 25  
ք. Վանաձոր